Հաստատված է՝
Հայկական բժշկական ինստիտուտի
Ռեկտորի 05/09/2017թ.
թիվ 620§2/12 հրամանով
Ընդունված է՝
Հայկական բժշկական ինստիտուտի
գիտական խորհրդի 29.08. 2017 թ.
թիվ 43 նիստում

ռեկտոր՝ Մ.Ա. Աստաբացյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

(վերահաստատված)

Երեւան 2017

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. ՀԲԻ-ում սկսած 2012-13 ուսումնական տարվանից, ուսանողների ընտրությունը և ընդունելությունը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության <<ՀՀ պետական և ոչ պետական բուհերի ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ>> ապրիլի 26-ի 2012թ. N 597-Ն որոշման:
2. ՀԲԻ-ում ընդունելության գործընթացը ներառում է մասնագիտությունների հայտագրումը, ընդունելության կազմակերպումը, անցկացումը, ընդունելության քննությունների բողոքարկումը, ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա ՀԲԻ-ում ընդունելության մրցույթի անցկացումը:
3. ՀԲԻ-ում ընդունելությունը կատարվում է տվյալ ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության կողմից հաստատած մասնագիտությունների ցանկի համաձայն ՙբուժական գործ՚ մասնագիտությամբ 060100 (091201.00.7) և ՙստոմատոլոգիա՚ 060200 (091101.00.7):
4. Ընդունելության քննությունները կենտրոնացված և միասնական քննություններ են, որը անցկացվում է վերը նշված կարգով:
5. Դիմորդները պետք է հանձնեն երեք առարկայից ընտրության կարգով երկուսը (քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն): Գիտելիքների գնահատումը կատարվում է 20 բալային համակարգով: Ընդունելության քննությունների ընթացակարգը հսկվում է հանձնաժողովի անդամների կողմից, թափանցիկ է, քանի որ ընթացքը ներկայացվում է տեսախցիկների միջոցով: Քննությունների գումարային արդյունքով դիմորդը մասնակցում է հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից կազմակերպվող մրցույթին: Յուրաքանչյուր տարի ինստիտուտը իրավունք ունի ընդունել մոտ 160 ուսանող, որից 70 ՙբուժական գործ՚ մասնագիտությամբ, իսկ 90 ՙստոմատոլոգիա՚ մասնագիտությամբ:
6. ՀԲԻ-ում ընդունելության դիմում-հայտերի և փաստաթղթերի ընդունումը կատարվում է ընդունող հանձնաժողովի կողմից համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատած կարգի 22-27 կետերի:
7. Ընդունող հանձնաժողովի կազմը հաստատվում է ՀԲԻ-ի կառավարման խորհրդի կողմից ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ռեկտորը (նախագահ) պրոռեկտորը (տեղակալ): Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին, նշանակում է ընդունող հանձնաժողովի նախագահը:
8. Դիմորդը փաստաթղթերը հանձնելու համար լրացնում է դիմում-հայտը որտեղ պարտադիր առաջինը հայտագրում է ՀԲԻ-ի ընտրած մասնագիտությունը:
9. Դիմորդը դիմում-հայտի հետ ներկայացնում է

   1) լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ).

2) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի).

3) փաստաթուղթ զինվորական ծառայությանն առնչության մասին (զորակոչայինտարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորա-կան հաշվառման փաստաթղթերում՝ տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից՝ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում).

4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական): Անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ.

5) զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու:

6) սույն կարգի 105-րդ և 106-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր.

7) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները.

8) ներբուհական յուրաքանչյուր քննությանը մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը: